ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

15 ՄԱՅԻՍԻ
2026 թ.
№ 8 (1163)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 81-ՐԴ ՏԱՐԻՆ

Նրանք մոտեցրին հաղթանակը

Մայիսի 9-ին նշում ենք Հաղթանակի ու խաղաղության տոնը: Լրացավ 1945 թվականի Մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 81-րդ տարին, հաղթանակ, որում մեծ է հայ ժողովրդի ներդրումը. Մեծ հայրենականում տարած հաղթանակը նաև հայ ժողովրդի անկոտրում կամքի ու միասնականության շնորհիվ ձեռք բերվեց:

Ֆաշիզմի դեմ պատերազմը ոտքի հանեց նաև հայ ժողովրդի զավակներին, որոնք մարտական փառավոր էջեր գրեցին: Նրանցից շատերը չվերադարձան մարտի դաշտից՝ զոհվեցին կամ անհետ կորան, պատերազմից նրանց շատերի «սև թղթերը» հասան ընտանիքներին, և հարազատները մինչև այսօր դարակներում խնամքով պահում են դրանք՝ որպես թանկ հիշատակ...

Ցավոք, աստիճանաբար նոսրանում են Մեծ հայրենականի փառավոր հաղթանակը կերտած հայ քաջորդիների շարքերը. Մանկավարժական համալսարանից Հայրենականի մասնակիցներն արդեն չկան, սակայն տարիների հետ չի խամրում նրանց մասին հիշողությունը. յուրաքանչյուր հայ ընտանիքում խնամքով պահվում են պատերազմի հիշողությունն իրենց մեջ ամփոփող դեղնած լուսանկարներն ու պապերից լսած կամ պատերազմի հաղթական ավարտի ականատեսների պատմությունները: Այդ պատերազմն ավարտվել է, բայց այն շարունակվում է նրանց հոգիներում ու սպիացած վերքերում...

Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր խիզախորեն պայքարեցին՝ իրենց կյանքի ու սխրանքների գնով մոտեցնելով բաղձալի հաղթանակը:

Վստահ ենք, որ այսօրվա սերունդը, պատրաստ է կրկնել պապերի սխրանքը: Նաև վստահ ենք, որ համախմբվելով միասնականության ու հայրենիքի հզորացման գաղափարի շուրջ, մենք նորովի կարժևորենք մայիսյան հաղթանակների փառքը:

Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից
կարող է միավորել հայերին՝ հոգով, մտքով և
արյունով, այն է՝ ազգային սերը:

ՐԱՖՖԻ

Այնքան ամուր ես կապել ինձ քեզ հետ,
Որ անգամ հազար սարերով հեռու՝
    քո քարն եմ փնտրում,
Քո բա՛ռն եմ փնտրում մեսրոպահնչյուն:
Ու երբ գտնում եմ տուֆի բարձրագոչ
    լռությամբ շինված որևէ մի շենք,
Ու երբ լսում եմ հայերեն մի խոսք,
Թվում է՝ հիմա կտեսնեմ նաև դաշտերդ հուռթի,
Լեռներդ՝ վառված շանթ ու արևից
Ու մանուկներիդ, որ տոտի՛կ-տոտի՛կ,
Հողիդ ու ջրիդ ինձանից մոտիկ
    ինքնանկա՛րդ են,
Քայլող քո խի՛ղճը, քո բաց ճակա՛տը
Եվ աշխարհավեր փոթորիկներից առ քեզ ծրարված
    Հավատը կյանքի:
Ես – քեզնից հեռու անօգ և անուժ,
Ես – քեզնից հեռու անպռունկ մի կուժ,
Ես – քեզնից հեռու պտղազուրկ մի ծառ,
Ես – քեզնից հեռու անիմաստ մի բառ,
Ես – քեզնից հեռու...
Բայց արժե՞, արդյոք, մտածել հիմա,
Թե քեզնից հեռու ես ի՞նչ կլինեմ
    կամ ինչպե՞ս կապրեմ,
Երբ ողջ էությամբ, ամենափոքրիկ բջիջով անգամ,
Անվանդ հետ եմ ու հողի՛դ հետ եմ
    իմ բախտը կապել:

ՖԵԼԻՔՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

«Լավագույն ուսանող». ամենասպասված մրցանակաբաշխությունը

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական ամենասպասված՝ «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը:

Բեմ բարձրացան 10 ֆակուլտետներից ընտրված լավագույն ուսանողները՝ Հասմիկ Գալստյան, Հասմիկ Պետրոսյան, Էլեն Նեմեսնիկյան, Աստղիկ Հարությունյան, Կարինե Ավալյան, Մարիամ Գրիգորյան, Շուշան Խաչատրյան, Ջուլիետա Սահակյան, Սիմոն Հովհաննիսյան, Աննա Խարիտովա:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց լավագույններին և հետադարձ հայացքով հիշեց իր ուսանողական տարիները:

«Դուք բոլորդ արդեն իսկ տարվա լավագույն ուսանողներ եք, դուք մանկավարժ պատրաստող մայր բուհի ուսանող եք, իսկ դա առաքելություն է, կարգավիճակ, պատասխանատվություն: Ես մշտապես ուսանողներին խորհուրդ եմ տալիս օգտվել բոլոր այն հնարավորություններից, որը բուհն ընձեռում է նրանց»,- ասաց Լիլիթ Մկրտչյանը և ուսանողներին հորդորեց՝ լինել ակտիվ, ձեռք բերել ոչ միայն գիտելիք, այլև իմացություն, հմտություններ զարգացնել, որպեսզի կարողանան ժամանակակից աշխարհում որպես մարդ ու քաղաքացի իրենց տեղը գտնել:

Այդ համատեքստում նա առանձնացրեց 10 ֆակուլտետների ընտրված այն լավագույններին, որոնք, որպես այդպիսին, իրենց մասնագիտության և ֆակուլտետի հավաքական կերպարն են ներկայացնում այսօր. «Դուք ձեր առաջադիմությամբ, պատասխանատվությամբ, կատարած աշխատանքով ցույց եք տվել, որ բոլոր ուսանողներից մի փոքր ավելին եք և ներկայացուցիչն եք բոլոր ուսանողների. սա ոչ միայն առավելություն է, այլև պատասխանատվություն, նախ և առաջ՝ պատասխանատվություն: Դա խոսում է այն մասին, որ դուք պետք է լինեք օրինակելի ոչ միայն համալսարանում, ոչ միայն ֆակուլտետում, այլև մեր պետության սահմաններում և հանրության մեջ ունենաք բուհը ներկայացնելու պատասխանատվություն»:

Լիլիթ Մկրտչյանը շնորհակալություն հայտնեց հաղթած ուսանողներին, որոնք վերցրել են սոցիալական պատասխանատվություն՝ մասը կազմելու ավելի երջանիկ ու բարեկեցիկ կրթական միջավայրի:

2024 թվականի լավագույն ուսանողուհի Նոնա Խաչատրյանը հայտարարեց 2025 թվականին համալսարանի «Լավագույն» ճանաչված ուսանողի անունը՝ Սիմոն Հովհաննիսյան, որին էլ հանձնեց լավագույնի տիտղոսը՝ բոլոր լավագույններին մաղթելով շարունակական հաջողություններ:

Հավելենք, որ այս ուսումնական տարվա լավագույն ուսանողներին սպասվում է կրթական, մշակութային և ճանաչողական երկօրյա այց դեպի Վրաստան, իսկ ՀՊՄՀ լավագույն ուսանողը հնարավորություն կստանա մեկ կիսամյակ սովորել եվրոպական բուհերից մեկում:

Լավագույններին իրենց կատարումներով շնորհավորեցին Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտական խմբերը՝ օրը դարձնելով ավելի հետաքրքիր ու հիշարժան:

Սիլվա Ասրյան

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը մայիսի 13-ին Մանկավարժական համալսարանում ընդունեց Ուրուգվայի Հանրապետության պատվիրակությանը՝ Ուրուգվայի Հանրապետության Հանրային կրթության ազգային վարչության /ԱՆԵՊ/ կենտրոնական կառավարման անդամ Էլբիա Պերեիրային, ԱՆԵՊ-ի Միջազգային հարաբերությունների և համագործակցության բաժնի տնօրեն Վիկտորիա Ֆարոպպային, Ուրուգվայի Հայկական բարեգործական ընդհանուր միության /ՀԲԸՄ/ կրթական գործերով տնօրեն Խավիեր Պոլադիանին: Հանդիպմանը ներկա էին ՀՊՄՀ ղեկավար կազմը, ինչպես նաև Ուրուգվայի դեսպանի տեղակալ Սիրանուշ Տիտիզյան-Մալխասյանը և ԿԳՄՍ նախարարության բաժնի պետ Անգելինա Հովհաննիսյանը:

Պատվիրակության անդամները փաստեցին, որ Ուրուգվայը առաջին անգամ է նման ներկայացուցչական կրթական առաքելությամբ հանձնախումբ ուղարկել Հայաստան: Նրանք ներկայացնում են ազգային խորհուրդը, որը զբաղվում է հանրակրթության հարցերով՝ տարրական, միջին և ավագ դպրոցի կրթության հարցերով, բացառությամբ բարձրագույն կրթության:

Հյուրերը ներկայացրին Ուրուգվայի կրթական համակարգի առանձնահատկությունները՝ ընդգծելով, որ իրենց երկրում մանկավարժական կրթությունը չի իրականացվում համալսարանական մակարդակով, և մանկավարժությունը չի համարվում բարձրագույն կրթություն: Եվ քանի որ Ուրուգվայի կրթական համակարգը այս պահին գտնվում է անցումային փուլում, մտածում են մանկավարժական կրթությունը տեղափոխել բարձրագույն կրթության տիրույթ և դարձնել բարձրագույն կրթության խնդրո առարկա՝ մասնագիտական կայացման առումով:

Հանձնախմբի անդամները Մանկավարժական համալսարան էին այցելել՝ ծանոթանալու մանկավարժներ պատրաստող համալսարանի փորձառությանը և այդ համատեքստում համագործակցելու մանկավարժական կրթության հարցերի շուրջ:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ասաց, որ տեղյակ է Ուրուգվայի և Հայաստանի հարաբերություններին, հայկական համայնքի մեծ դերին ու կարիքներին, որ այդ երկիրն առաջինն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ընդգծեց՝ Հայաստանի և Ուրուգվայի հարաբերությունները երկուստեք կարող են արդյունավետ լինել:

«Մենք խորքային հիմնարար փոփոխություններ ենք իրականացնում և փորձում ենք այնպես անել, որ Մանկավարժականը այդ համատեքստում պատրաստի պահանջարկ ունեցող մասնագետներ»,-ասաց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ պատվիրակության անդամներին ներկայացնելով համալսարանի մասնագիտությունները, միաժամանակ անդրադարձ անելով մանկավարժներ, հատուկ և ներառական կրթության մասնագետներ պատրաստելու մենաշնորհային դիրքին:

«Մենք կարևորում ենք մշտապես սովորելու գործընթացը, սիրով կկիսենք մեր փորձառությունը, և մենք էլ ձեզնից կսովորենք»,-ասաց նա:

Համագործակցությունը ենթադրում է ոչ միայն սովորեցնել, այլև սովորել՝ վստահեցրին կողմերը՝ նկատելով, որ դա է համագործակցության հաջողության երաշխիքը:

Պատվիրակության անդամները Լիլիթ Մկրտչյանին նվիրեցին Հայոց Ցեղասպանության մասին Ուրուգվայում մրցույթի արդյունքում հրատարակված գիտական հետազոտությունների գիրք, որը բխում է Ուրուգվայի մարդասիրական պահանջներից, և փաստեցին՝ այդ նախաձեռնությունը շատ ավելի խորքային համագործակցության արդյունք է: Խոհագրությունների գրքի հեղինակը ուրուգվայցի և հայ երեխաներն են: Հյուրերն ընդգծեցին, որ գիրքն այդ մի գործիքակազմ է, որով պայքարում են մարդու իրավունքների պաշտպանության ու ժողովրդավարության կայացման համար:

Խոսակցություն ծավալվեց ներառական կրթության շուրջ, և կողմերը նկատեցին՝ այս հարցում նույն ճանապարհով են առաջ գնում:

Ուրուգվայի պատվիրակության անդամները հետաքրքրվեցին կրթական ոլորտում համագործակցելու առաջնայնություններով, որպեսզի նախանշեն հաջորդական քայլերը: Երկուստեք որոշեցին ստեղծել աշխատանքային փորձագիտական խումբ, որի գործունեությունը միտված կլինի կանխորոշված ուղղություններով արդյունավետ համագործակցությանը:

Սիլվա Ասրյան

Հերթական հանդիպումը. «Ապահով միջավայր՝ իրական զարգացում»

Մանկավարաժական համալսարանաում «Գլուխ գլխի» խորագրի ներքո կայացավ երրորդ հանդիպումը:

Տնօրենների հերթական հանդիպման բանախոսը «Դասավանդիր հանուն Հայաստանի» կրթական հիմնադրամի «Սերունդ» ծրագրի ղեկավար Անի Մկրտչյանն էր, թեման՝ «Ապահով միջավայր՝ իրական զարգացում»:

Բանախոսն իր և ուրիշների օրինակով ներկայացրեց դեպքեր, երբ սովորելու վայրում ստեղծված անապահով միջավայրը չի խթանում սովորողի զարգացումը, երբ երեխան այլ դպրոց ու միջավայր տեղափոխվելուց հետո կարող է ներկայանալ իր հնարավորություններով ու ձգտումներով՝ ուսման մեջ ցուցաբերելով բարձր առաջադիմություն:

Բանախոսը հայտնի տեսությունների միջոցով ներկայացրեց թեմայի հիմնական ուղերձները. «Հարգացումը տեղի է ունենում հանգստության կետից, ակադեմիական առաջընթացն անմիջականորեն կապված է դրական հույզերի հետ, ապահով միջավայրում է, որ սովորողները և ուսուցիչներն իրենց զգում են ֆիզիկապես հուզականորեն ու հոգեբանորեն անվտանգ, վախի, ծաղրի, բռնությունից և խտրականությունից զերծ պայմաններում, և ապահովում են ակադեմիական մասնագիտական և սոցիալ-հուզական մտածողության առաջընթաց»:

Անի Մկրտչյանը ներկաների հետ քննարկեց Մասլուի բուրգի հիմնարար ու հոգեբանական պահանջմունքները՝ ընդգծելով ինքնահիրացման ողջ ընթացքն ու կարևորությունը:

Անին խոսեց հոգեբանական կարիքների, կարողությունների, ներքին ու ինքնավար մոտիվացիայի մասին. «Մարդը կարող է ունենալ կարողություններ, բայց ոչ մոտիվացիա, և հակառակը: Կարողություն, ինքնավարություն, պատկանելություն. այս երեք կարիքները բավարար են, որ մարդը ունենա մոտիվացիա»:

Տնօրենների հետ ակտիվ երկխոսության ընթացքում բանախոսը հանգեց եզրակացության. «Կրթական հաստատությունների նպատակը ոչ թե ստիպելն է սովորել, այլ այնպիսի միջավայր ստեղծել, որտեղ մարդը կցանկանա սովորել»:



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ (GIS) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅՈՎ

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում կայացավ տեղեկատվական հանդիպում՝ «Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (GIS) ժամանակակից կրթության և հետազոտության մեջ» թեմայով: Հանդիպման նպատակն էր պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացնել աշխարհագրական տեղեկատվական համակարգերի արդիական հնարավորությունները, դրանց դերը ժամանակակից կրթական և գիտահետազոտական գործընթացներում, ինչպես նաև ծանոթացնել ArcGIS Pro ծրագրային միջավայրի հիմնական գործիքներին:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին տարածական տվյալների վերլուծության գործնական օրինակներ, ընդգծվեց Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի կարևորությունը կրթության թվայնացման, գիտական հետազոտությունների զարգացման և տվյալահեն որոշումների ընդունման գործընթացներում:



Միջոցառումը կազմակերպվել էր ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի նախաձեռնությամբ և կրում էր տեղեկատվական բնույթ: Հանդիպումը, որը վարում էր Կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավար Անի Հակոբյանը, միաժամանակ կարևոր հարթակ դարձավ համալսարանի տարբեր ակադեմիական ստորաբաժանումների միջև միջգիտակարգային համագործակցության զարգացման համար, քանի որ միջոցառմանը մասնակցում էին նաև Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկանը և ֆակուլտետի ներկայացուցիչները:

Քննարկումների ընթացքում ընդգծվեց, որ GIS տեխնոլոգիաները ժամանակակից կրթության մեջ ունեն միջգիտակարգային կիրառություն և կարող են արդյունավետորեն ինտեգրվել ոչ միայն աշխարհագրական, այլև մաթեմատիկական, տեղեկատվական, տեխնիկական և բնական գիտությունների կրթական ծրագրերում:

Նախատեսվում է, որ տեղեկատվական հանդիպմանը կհաջորդեն վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված բուհական կրթական ծրագրերում Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) կիրառության ընդլայնմանը և դասախոսների կողմից դրանց գործնական օգտագործմանը ուսումնական գործընթացում:

Սիլվա Ասրյան

Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ «Մանկավարժության արդի հիմնախնդիրներ և լուծումներ» խորագրով ուսանող-դասախոս համատեղ ամենամյա 13-րդ գիտաժողովը:

«Մանկավարժությունը բոլոր ժամանակներում գործ ունի, կրթությունը, դաստիարակությունը, ուսուցումն իրենց գործառույթներն ունեն և այդ երեքի համերաշխության ազդեցության արդյունքն է բարեկիրթ մարդը,-ասաց Միդա Թոփուզյանը:-Այսօր մանկավարժությունը միայն ինքը չէ երեխային դաստիարակողը. ինքն ազդող է, համաձևավորող, որովհետև երեխան ինքն է ընտրում այդ ազդեցությունից ինչը և ինչքան վերցնի: Ուստի, մանկավարժությունը համագործակցություն է, փոխօգնություն, համակեցություն»,-ասաց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Միդա Թոփուզյանը:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ձեռնարկը երկխոսության և համագործակցության կարևոր հարթակ համարեց, կարևորեց մանկավարժության դերը, պատվաբեր առաքելություն համարեց մանկավարժի մասնագիտությունը՝ ընդգծելով, որ կրթությունը պատմության բոլոր շրջափուլերում և հասարակարգերում ճգնաժամ ապրել է, եղել փնտրտուքների մեջ, և որ կրթությունը պետք է լինի նորարարությունների առաջամարտիկ, իսկ ամենամեծ դերը՝ արժեհամակարգի ձևավորումը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանն էլ ընդգծեց՝ գիտաժողովում ներկայացված զեկույցներն արտացոլում են ժամանակակից մանկավարժության նոր միտումները, որոնք հետագա հետազոտությունների, մասնագիտական և անձնային աճի խթան կդառնան:

«Մանկավարժությունը համագործակցություն է, փոխօգնություն, համակեցություն». *Միդա Թոփուզյան*

«Արդեն 13-րդ տարին է, ինչ մենք կազմակերպում ենք դասախոս-ուսանող համատեղ կոնֆերանսը, և երկու նպատակ ենք հետապնդում. առաջին նպատակն այն է, որ ուսանողը հնարավորություն ունենա իր ավարտական աշխատանքի սահմաններում կատարած հետազոտությունը հանրայնացնի. սա ինչ-որ տեղ ավարտական աշխատանքի պաշտպանությունից առաջ փորձառության մի դրվագ է, որն ուսանողին ավելի մեծ վստահություն է տալիս՝ կարողանում է լսարանի հետ հաղորդակցվել, հարցերին պատասխանել, պարզաբանել հարցերը և այլն:

Երկրորդ նպատակը, որը ես շատ եմ կարևորում, և որին միտված մեր ամբիոնը նաև շատ այլ միջոցառումներ է իրականացնում, այն է, որ ուսանողը դեռևս ուսանողական նստարանից հնարավորություն ունի ներդրում անելու իր մասնագիտության մեջ, որովհետև այդ հետազոտություններն ավարտվում են ինչ-որ նորույթով. ուսանողները երաշխավորություններ, մանկավարժական պայմաններ, առաջադրանքներ են մշակում, մեթոդական տարբեր համակարգեր են ստեղծում, և այդ բոլորը նորություններ են, որոնք ուսուցիչները կարող են իրենց աշխատանքում օգտագործել:

Սրանք են այն հիմնական նպատակները, որի համար մենք այս խորհրդաժողովը ավանդական ենք դարձրել: Ես նաև կարևորում եմ ուսանող-դասախոս համագործակցությունը, որովհետև մանկավարժությունը համագործակցություն է և հարաբերություն»,-ասում է պրոֆեսորը:

Նա վստահեցնում է՝ երբ ամփոփում են 13 տարիների առաջընթացն ու զարգացումը, պարզ է դառնում՝ եթե առաջին տարիներին հետազոտությունն էին ներկայացնում և վերլուծում հետազոտության արդյունքները, ապա այսօր հետազոտության արդյունքների վրա նորույթ են ստեղծում, որը ուսուցչին պետք է և այսօր ևեթ դա կարող է օգտագործել իր աշխատանքում:

Միդա Թոփուզյանը ներկայացնում է՝ լինում են և հաջողված աշխատանքներ, և աշխատանք, որը գնահատում է տվյալ ուսանողի կարողություններն ու հնարավորությունները. մեկի կարողությունները ուժեղ են, մյուսի մանկավարժական մտածելակերպն է ուժեղ, երրորդի աշխատանքը շատ պրակտիկ է և արդիական մտածողություն ունի:

Մի խոսքով՝ եթե համեմատում են նախորդ տարիների և այսօրվա աշխատանքները՝ զարգացումն ու առաջընթացը նկատելի է և ուսանողների, և դասախոսների մոտ:

«Ներկա կոնֆերանսի առանձնահատկությունն այն է, որ ոչ միայն դասախոսը ուղղորդում և աջակցում է հետազոտություն իրականացնող ուսանողին, այլև կոնֆերանսի ընթացքում ելույթ է ունենում՝ ընդգծելով աշխատանքի արդիականությունը և նորույթը, թեմայի շրջանակում այլ կարևոր շեշտադրումներ էլ է անում»,-նշում է պրոֆեսորը:

Հավելենք, որ կոնֆերանսի պլենար նիստում ելույթ ունեցավ 4 ուսանող, ապա սկզբնական կրթության մասնախմբում, որտեղ 8 թեմա էր ընտրված, քննարկվեցին տարրական կրթության հիմնախնդիրները, իսկ երկրորդ մասնախմբի քննարկումները (7 թեմա) սոցիալական մանկավարժության հիմնախնդիրներին էր վերաբերում:

Պրոֆեսոր Միդա Թոփուզյանն ընդգծում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս դեռևս ուսանողական տարիներից ներդրում անել իրենց մասնագիտության մեջ՝ շեշտադրելով նաև պրակտիկայի շրջանակում արտադասարանական աշխատանքի կազմակերպումը, որի համատեքստում, ուսանողական աշխատանքային խմբերի ներկայացմամբ, հունիսին կամփոփեն պրակտիկայի ուղղությամբ արտադասարանական աշխատանքի բարելավման շրջանակում կատարված աշխատանքները:

Սիլվա Ասրյան

«ՄԵՆՔ ԱՐԵՎԻ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ».

ՀՊՄՀ 57 հիմնական դպրոցում կայացավ ռուսերենի Այբբենարանի հանդեսը. «Ողջույն, սիրելի՛ ընկերներ: Ես եկել եմ, որպեսզի լուսավորեմ այս կախարդական օրը՝ մեր առաջին գրքի՝ Ռուսերենի այբբենարանի տոնը (Праздник букваря): Ես ձեզ կնվիրեմ ժպիտներ և կօգնեմ յուրաքանչյուրիդ բացահայտել գիտելիքների հրաշքները», -այս խորհրդանշական խոսքերով մեկնարկեց ՀՊՄՀ 57 հիմնական դպրոցի 2 «Ա» և 2 «Բ» դասարանների հանդեսը:

«Մենք արևի զավակներն ենք» խորագիրը կրող միջոցառումը վերածվել էր իրական գարնանային տոնի՝ մանկական ժպիտներով, գունեղ բեմականացումներով և գիտելիքի լույսով: Յուրաքանչյուր տառի, բառի ու հնչյունի հետ երեխաները մեկ անգամ ևս բացահայտեցին ուսման հրաշքը՝ ցույց տալով, որ Այբբենարանը պարզապես գիրք չէ, այլ ճանապարհ դեպի նոր աշխարհներ, երազանքներ և բացահայտումներ: Դպրոցականները նշեցին՝ թվում է՝ դեռ երեկ էր, երբ առաջին անգամ բացեցին ռուսերենի Այբբենարանի էջերը, իսկ այսօր արդեն վստահորեն ընթերցում են, արտասանում, երգում ու պատմում: Նրանց համար յուրաքանչյուր տառ դարձել է լույսի շող, որը լուսավորում է դեպի գիտելիք տանող ճանապարհը: Տոնական միջոցառման ընթացքում ներկաները հայտնվեցին հեքիաթային միջավայրում, որտեղ երեխաներին ուղեկցում էին սիրված հերոսները՝ Բուրատինոն, Մալվինան, Անգետիկը և Տառերի փերին: Հեքիաթային հերոսների մասնակցությամբ բեմական համարները, երգերն առավել տոնական մթնոլորտ ստեղծեցին:

«Տառերը լույսի շողեր են, իսկ գիտելիքը՝ լույս: Ով սովորում է, դառնում է ավելի խելացի, վստահ և բարի: Այբբենարանն օգնում է մեզ կարդալ, հասկանալ հեքիաթները և ճանաչել աշխարհը»,-նշեցին աշակերտները՝ ընդգծելով գիտելիքի և լեզվի իմացության կարևորությունը: Միջոցառումն ամփոփվեց միասնության, ընկերության և գիտելիքի ուժի մասին խորհրդանշական ուղերձով: Քայլ առ քայլ տառերի աշխարհը բացահայտած փոքրիկները վստահեցրին՝ ցանկանում են դառնալ «Արևի զավակներ»՝ պահպանելով բարությունը, սերը և գիտելիքի լույսը:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհավորեց աշակերտներին տառաճանաչ դառնալու և ևս մեկ Այբբենարան սովորելու առթիվ: Նա դպրոցի կարևորագույն ձեռքբերումներից մեկը համարեց ռուսերենի որակյալ ուսուցումն ու այն, որ տարիներ շարունակ պահպանվում և շարունակվում է կապը մեծ մշակույթի և լեզվի հետ:

«Լեզուն այն բանալին է, որով հաղորդակցվելու եք աշխարհի հետ և բացելու եք բազմաթիվ դռներ»,-նշեց տնօրենը՝ կարևորելով լեզվի դերն ու նշանակությունը երեխաների ապագայի կերտման գործում: Ռուսաց լեզվի ուսուցչուհիները Անժելա Սարգիսովնան, Մարիետա Վազգենովնան և Մելինե Հրաչիկովնան են: Ինչպես նշեցին նրանք՝ երեխաներն ինքնին արևի շողեր են, ապագայի հույսն ու լույսը: Նրանցից յուրաքանչյուրն իր մեջ կրում է գիտելիքի, բարության և ստեղծագործ միտքը, որը շարունակելու է ջերմացնել շրջապատը, լուսավորել նոր ճանապարհներ և գեղեցկացնել աշխարհը: Ուսուցչուհիների համոզմամբ՝ փոքրիկների ձեռքերում է վաղվա օրը, իսկ առաջին հաջողությունները կարևոր հաղթանակների սկիզբն են:

Մարին Աղեկյան

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՍԵՐ ԱՐԹՆԱՑՆԵԼՈՒ ԱՄԵՆԱՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՍԵՓԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆ Է».

Սուրեն Դանիելյան

Սուրեն Դանիելյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

-Պարո՛ն Դանիելյան, ե՞րբ և ինչպե՞ս որոշեցիք ընդունվել Մանկավարժական:

-Մանկավարժական որոշեցի ընդունվել դեռ դպրոցական նստարանից՝ ծնողներիս ճանապարհով: Հայրս բանասեր էր, մայրս՝ մանկավարժ: Իմ մեջ երկվություն կար՝ ընտրել պատմություն, թե բանասիրություն: Ի վերջո, բանասիրությունը հաղթեց:

-Մանկավարժականը Ձեր կյանքում: Անդրադարձ անցած ճանապարհին:

-Մանկավարժականից սկսվեց իմ աշխատանքային ու մասնագիտական գործունեությունը, որ շարունակվում է հինգ տասնամյակից ավելի: Մանկավարժականում տեսա այն, ինչին ձգտում էի. առաջին հերթին՝ տարերք, որին այսօր էլ հավատարիմ եմ:

-Ովքե՞ր են եղել Ձեր ուսուցիչները համալսարանում ուսանելու տարիներին:

-Իմ ուսուցիչները նվիրական մարդիկ էին՝ բանասեր-ուսուցչապետեր Վաչե Պարտիզունին, Արշալույս Բաբայանը, գիտնականներ, որոնք մանկավարժ ձևավորելու գաղտնիքը գիտեին:

Ուսուցիչը նա է, ով թափանցել է հոգեաշխարհդ, հավատացել քեզ: Այդ հավատը ես մինչև հիմա փորձում եմ վերադարձնել նրանց:

-Գրականության մեջ Ձեր ուսուցիչը:

-Գրականության մեջ իմ ուսուցիչները շատերն են՝ Վարուժան, Թումանյան, Չարենց և էլի շատերը: Բայց նրանց մեջ առանձնանում է Հակոբ Օշականը: Նա կարողացավ ինձ ցույց տալ մարդուն՝ իբրև ուսուցիչ, իբրև անհատականություն: Նա ինձ համար առաջնորդ է և գեղարվեստական գրականության, և քննադատության մեջ:

- Որո՞նք են դասախոսական աշխատանքի առանձնահատկությունները: Ներկայացրեք, խնդրեմ, Ձեր օրինակով:

-Դասախոսը ինձ համար և սովորեցնող է, և գիտնական, բայց ամենից շատ՝ այն անհատականությունը, որ խնամքով թաքցնում է իրեն ուսանողներից, իր ներաշխարհը, անհանգստությունները, որ նրանց համար պահում է անմնացորդ նվիրումը կրթական ասպարեզին:

- Բնութագրեք մերօրյա ուսանողին:

-Մերօրյա ուսանողը հետաքրքիր ու հակասական զգացումներ է առաջացնում: Ունենք հրաշալի ուսանողներ, միաժամանակ կա կրթության հանդեպ երբեմն ոչ այնքան պատասխանատու վերաբերմունք: Ես կուզեի ուսանողի մեջ տեսնել նվիրյալին: Այդ ժամանակ բնութագրության խնդիր չէր լինի: Իսկ նվիրյալը նա է, ով սիրում է իր մասնագիտությունը, ով իր աշակերտին վաղը տանելու է իր ետևից: Պիտի աշխատես փնտրել և գտնել նրան, ով վաղը հաջորդելու է քեզ:

-Գրականությունը Ձեր տարերքն է, մասնավորապես արևմտահայ և սփյուռքահայ գրականությունը... Ո՞րն է մերօրյա գրականության ամենամեծ դասը:

-Գրականությունը պիտի ստիպի սիրել մարդուն, ներաշխարհ ձևավորել, առաջնորդել:

-Ովքե՞ր են այսօր սփյուռքահայ գրականության անհատականությունները՝ ըստ Ձեր գրական նախասիրությունների:

-Սփյուռքահայ գրականության անհատականությունների մեջ կարելի է առաջին հերթին հիշատակել պոլսահայ գրողներին (թեպետ Պոլիսը բնօրրան է արևմտահայ գրականության համար)՝ Զահրատ, Զարեհ Խրախունի, Ռոպեր Հատտեճյան, Իգնա Սարըասլան, վերջին շրջանում՝ տարբեր ափերում հանգրվանած լիբանանահայեր Գրիգոր Պըլտյան, Վեհանույշ Թեքյան, Հարություն Պերպերյան և ուրիշներ:

-Ո՞րն է Սուրեն Դանիելյանի հավատամքը:

-Գրականության մեջ անկեղծությունը մինչև վերջ, ինչպես նաև լեզվին քաջ տիրապետելու պատասխանատվությունը:

-Ո՞րն է ուսանողների մեջ գրականության հանդեպ սեր արթնացնելու ամենաուղիղ ճանապարհը:

-Առաջին հերթին ուսանողներին դեպի գեղեցիկը մղելու ցանկությունն է էականը, ինչը գտնելը միշտ էլ դժվար է: Գեղեցիկի խորհրդի ճանաչումը միշտ զոհողություն է պահանջում, ինչպես լավագույնս ձևակերպել է Վարուժանը («Գեղեցկության արձանին», «Նավասարդյան»): Գեղեցիկը ամեն վայրկյան փոխվում է. պիտի շտապել նրա ետևից:

Ուսանողների մեջ գրականության հանդեպ սեր արթնացնելու ամենաուղիղ ճանապարհը սեփական օրինակն է: Ինքս էլ կուզեի առաջին կուրսում լինել և գրականությունը յուրացնել այնպես, ինչպես առաջին անգամ: Մարդը երբեք չպիտի կորցնի իր մեջ ապրող ուսանողին:

-Եթե հնարավորություն տրվեր Ձեզ, ի՞նչ կփոխեիք համալսարանում:

-Շատ բարդ է, որովհետև ամեն ինչ չէ, որ զարգանում է քո պատկերացումներին համապատասխան: Առաջին հերթին կուզեի մի քիչ ավելի պատասխանատու վերաբերմունք գիտական խոսքի և մի քիչ ավելի պահանջկոտ մոտեցում մայրենիի ուսուցչի մասնագիտությունն ընտրած ուսանողի հանդեպ:

Զրույցը՝ Սիլվա Ասրյանի

Դաս՝ նվիրված Հաղթանակի օրվան

«Մեր երախտագիտությունն ու խոնարհումը բոլոր նրանց, ովքեր կերտեցին մեր հաղթանակները». Մոսկվայի մարզի Խիմկի № 23 գիմնազիայում այս խորագրով հայ և ռուս տարբեր տարիքային խմբերի աշակերտների հետ դաս է անցկացրել հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սեդա Խաչատրյանը:

Դասն սկսվեց տերունական աղոթքով, ապա աշակերտները կարդացել են նախապես հանձնարարված շարադրությունները՝ իրենց այն հարազատների մասին, որոնք մասնակցել են 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմին:

Այնուհետև ուսուցչուհին պատմել է իր հոր՝ Գուրգեն Խաչատրյանի մասին, որն ինստիտուտի 1-ին կուրսից թողել է ուսանողական լսարանը և 18 տարեկանում մեկնել պատերազմի դաշտ:

Նովոռոսիյսկի մոտ ծանր վիրավորվել է, ապա հայտնվել ձկնորսական նավում այլ մարտիկների հետ, բայց տեղի ունեցած պայթյունը նրան ու մյուսներին նետել է Սև ծովի ալիքների մեջ: Լողալով մի կերպ ափ է հասել, ապա հայտնվել զինվորական հոսպիտալում:

Ուսուցչուհին հուզված պատմել է, թե ինչպես է հայրը հրաշքով փրկվել մահից, մինչդեռ, չիմանալով այդ մասին, նրա մահվան «սև թուղթ» են ուղարկել ծնողներին:

«Կարմիր աստղի» շքանանակիր հոր մարտական ուղու մասին աշակերտները լսել են համակ ուշադրությամբ, լարված հայացքներով հետևել պատմությանը, ապա դասարանում տիրել է քար լռություն, որը խորապես հուզել է ուսուցչուհուն:

Այնուհետև միասին դիտել են հոր մասին պատմող լուսանկարները, որոնք շատ խոսուն էին: Ամեն տարի մարտական ընկերներով հանդիպել են «Մալայա Զեմլյա»-յում՝ նշելու հաղթանակի օրը՝ Մայիսի 9-ը: Հիրավի հերոսական կյանք, որն ընդհատվել է կյանքի 78-րդ տարում:

«Հայրս կռվեց, պայքարեց և ապրեց. փառք բոլորին, որոնք մոտեցրին հաղթանակի օրը»,- դասն ամփոփել է Սեդա Խաչատրյանը, որը հայրենասիրության հերթական դասն է վարել նոր սերնդի երեխաների հետ, սերունդ, որը պատերազմի ու հաղթական ավարտի մասին իմանում է ֆիլմերից ու լուսանկարներից:

Ուսուցչուհին այսօր ապրում է հայրենիքից հեռու և հայ երեխաներին սովորեցնում է մեր ոսկեղենիկ հայերենով գրել ու կարդալ, ճանաչել հայ քաջորդիներին ու նրանց հերոսական պատմությունները:

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

-Պարո՛ն Գալստյան, Դուք ՀՊՄՀ շրջանավարտ եք. ի՞նչը առիթ դարձավ՝ դիմելու Մանկավարժական, մասնագիտության գրավչությունը, թե մի այլ դրդապատճառ կար:

-Թիվ մեկ դրդապատճառը իմ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին էր՝ Ջուլիետա Սարիբեկյանը: Նա արմատներով Վանաձորից էր և բնակվում էր ծիծեռնականիստ Աշտարակում: Նրա մասին սկսել եմ գիրք գրել և հենց այդպես էլ վերնագրել եմ հուշագիրքը՝ «Ջուլիետա Սարիբեկյան»: Շնորհանդեսը կկազմակերպենք Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան №1 դպրոցում, որտեղ անցել է իմ մանկությունն ու պատանեկությունը: Հրաշալի ուսուցչուհի, տարբերվող ուսուցչուհի, մենք նրան ցնծությամբ էինք դիմավորում: Կիրթ, մանկավարժական հնարներին տիրապետող, որին ցանկացա նմանվել: Քայլերս բերեցին Մանկավարժական ինստիտուտ (այն ժամանակ ինստիտուտ էր կոչվում) և ընդունվեցի բանասիրական ֆակուլտետ. դա 1984 թվականն էր: Երանելի՜ ժամանակներ էին:

Առաջին դասը... Տպավորվել է հիշողությանս մեջ: Պրոֆ. Աշոտ Աբրահամյանի դասախոսությունն էր՝ «Լեզվաբանության ներածություն»: Նրա եռաչափ լուսանկարն այսօր պատկերված է ֆակուլտետի չորս սյուներին, և մենք խորին խոնարհում ունենք հայտնի գրաբարագետի հանդեպ:

-Խոսե՛նք Ձեր ուսուցիչների մասին:

-Բուհում հրաշալի դասախոսներ եմ ունեցել: Ինչպես ասացի, աշակերտել եմ Աշոտ Աբրահամյանին, նաև Վաչե Պարտիզունուն՝ մի հրաշալի մանկավարժի, որի ղեկավարությամբ մանկավարժական պրակտիկան վարել եմ Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցում: Պատկառելի տարիք ուներ, բայց երբեք չէր տրտնջում ուսանողներին դպրոց տանելու, վարպետության դասեր ցուցադրելու և մեզ էլ հորդորելու, որ գեղեցիկ և նպատակային դասեր վարենք: Երախտագիտությամբ եմ հիշում պրոֆեսորին, և մանկավարժի նրա կերպարը միշտ փայփայում եմ իմ հոգում: Պարտաճանաչ էր, պերճախոս:

5-րդ կուրսում նորագույն շրջանի գրականությունը դասավանդել է հայ վեպի գիտակ Սևակ Արզումանյանը, հրաշալի դասախոս, անխոցելի գրականագետ:

Աշակերտել եմ պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանին. 1-ին կուրսում դասավանդել է բանահյուսություն և հայ հին գրականություն: Խիստ էր և խորքային գիտելիքներ փոխանցող: Մինչև այսօր էլ սիրով եմ աշխատում այդ շքեղ դասախոսի հետ, որովհետև տարիները գլորվել են, նա ավելի է իմաստնացել, ավելի է լցվել ցորենի հասկի պես: Նա համալսարանի ու ֆակուլտետի զարդն է:

-Մանկավարժականը Ձեր կյանքում:

-Մանկավարժականը այն վայրն է, որի հետ արդեն 40 տարի կապված եմ հոգևոր կապով, սովորել եմ Ալեք Մանուկյան 13 հասցեում գտնվող մասնաշենքի 3-րդ հարկում: Այստեղ սիրահարվել ենք, տխրել ենք, այստեղ փորձել ենք մանկավարժի որակներ ստանալ, դպրոցներ ենք այցելել, հանդիպումներ ունեցել: Հիշում եմ ռեժիսոր Երվանդ Ղազանչյանի հետ հանդիպումը: Այն ժամանակ դեկանը պրոֆեսոր Քոսյանն էր և հաճախ էր ուսանողների հետ հետաքրքիր հանդիպումներ կազմակերպում:

Մեզ երբեմն տանում էին ֆիլմերում նկարահանվելու. Պերճ Պռոշյանի «Հունոն» վեպի հիման վրա ֆիլմ էին նկարահանում: Եկան ռեժիսորներ, որոնք մեր ուսանողներին էպիզոդիկ դերերում նկարահանվելու առաջարկ արեցին: Մեր կուրսից 15 հոգի, այդ թվում և ես, մասնակցեցինք նկարահանումներին. մինչև երեկո Արարատի մարզի եկեղեցիներից մեկի բակում նկարահանվում էինք ֆիլմի տեսարաններում:

Հիշողությունները շատ են: Հիշում եմ 1988-ի երկրաշարժը. Վաչե Պարտիզունու դասն էր. պրոֆեսորը անհանգստացավ, երբ բոլորս դուրս թափվեցինք. առաջին պահից նա չէր զգացել՝ ինչ է կատարվում: Երկրաշարժի հաջորդ օրը տղաներով Գյումրիում էինք: Հետո եղանք Ստեփանավանի Գյառգյառ գյուղում և 2 տարի շինարարական աշխատանքներ իրականացրինք:

...21-22 տարեկան ուսանողներ էինք, երբ մասնակցեցինք Երևանի մարզահամերգային համալիրի վերականգնման աշխատանքներին. հրդեհվել էր համալիրի կենտրոնական շենքը: Կարեն Դեմիրճյանը մեզ շնորհակալություն հայտնեց:

Հրաշալի էքսկուրսիաներ էին կազմակերպվում. այսօրվա պես հիշում եմ մեր եռօրյա այցելությունը Ալավերդի քաղաք: Դա բարբառագիտական հավաք էր, բայց նաև ուսանողական խենթ ու խելառ թափառումներով լի օրեր:

Այսօր ջերմ կապի մեջ եմ իմ կուրսընկերների հետ. նրանք հայտնի ուսուցիչներ են հանրապետության տարբեր դպրոցներում: Այնուամենայնիվ, կուզեմ առանձնացնել կուրսի լավագույն ուսանողներից մեկին՝ Օլգա Դավթյանին, որը Գեղարքունիքի Վարդենիկ համայնքի լավագույն ուսուցչուհիներից է, և այսօր էլ իր գիտելիքներն է փոխանցում երիտասարդներին:

-Դուք տարբեր դասագրքերի համահեղինակ եք. ի՞նչ դժվարությունների եք հանդիպում դասագրքեր կազմելիս և ի՞նչ առանձնահատկություններ եք հաշվի առնում:

-2013 թվականից դասագրքաստեղծ խմբի մեջ եմ և համահեղինակ եմ «Մայրենի 5», «Մայրենի 6» դասագրքերի, տարրական դպրոցի ինքնուրույն ընթերցարանների: Բնականաբար, սա պատվելի գործ է: Իհարկե, կան նաև դժվարություններ: Առաջին հերթին պետք է ճանաչել աշակերտին, որպեսզի դասագրքերի համար այնպիսի նյութեր ընտրես, որ երեխաներին դուր գա. տարիքային առանձնահատկությունը շատ կարևոր է. դա պիտի հաշվի առնել: Գործընկերներով լինում ենք դպրոցներում, զրուցում ենք աշակերտների և ուսուցիչների հետ, ներկայացնում ենք նյութերը, երեխաների համար փոքրիկ գիտափորձերով ընտրում ենք մեթոդական զինանոցը: Կարևոր է նաև դասագրքի շարադրանքը, լեզվական նյութի մատուցումը, պատկերազարդումը, QR ծածկագրերի ճշգրիտ բաշխումը. մեր առջև կանգնած է 10-12 տարեկան դեռահասը: Այնպես պետք է մատուցել լեզվական նյութը, որ նրա համար մատչելի ու հասկանալի լինի, սիրով կարողանա ընթերցել և հասկանալ նյութը: Բնագրերը այնպիսին պիտի լինեն, որ երեխան չտրտնջա և կապվի դասագրքի հետ: Դասագիրքը իր ընկերն է: Այդ տարիքի երեխաների և ուսուցիչների համար ուսումնամեթոդական համալիրն է կարևոր. դասագրքից զատ մենք հեղինակում ենք խելացի ընթերցարաններ, աշխատանքային տետրեր, բառարաններ: Աշխատում ենք ստեղծել 5-րդ դասարանի աշակերտի բառապաշարի նվազագույն բառարան:

Աշոտ Գալստյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Բանասիրական ֆակուլտետի դեկան

-Ի՞նչն եք հատկապես կարևորում դասագրքեր կազմելիս:

-Դասագրքերը լեցուն են մարդակենտրոն գաղափարներով. առաջին արժեքը հայաստանասիրությունն է, եկեղեցասիրությունը և մարդասիրությունը: Կարևորում ենք նաև աշխարհաճանաչումը: Այս ամենը մենք պահպանել ենք դասագրքի նյութերում:

-Դուք հաճախ եք լինում դպրոցներում, հանդիպումներ ունենում աշակերտների և ուսուցիչների հետ:

- Ես և իմ գործընկեր Թամարա Թովմասյանը մի ծրագիր ենք կյանքի կոչել. «Դասը վարում է դասագրքի հեղինակը» խորագրով դասեր ենք վարում հանրապետության տարբեր դպրոցներում: Մեզ համար հետաքրքիր է՝ սիրե՞ց արդյոք երեխան մեր հեղինակած դասագիրքը, ո՞ր գրողների գործերն են առավել մատչելի, ո՞ր թեմաներն են ձանձրալի: 21-րդ դարի դպրոցականի հետ պետք է հաշվի նստել: Մեր այցերը դպրոցներ արդիական են և շատ անհրաժեշտ: Դրանք օգնություն են նաև ուսուցիչներին: Այսպիսի հանդիպումները ոչ միայն գիտելիք են փոխանցում, այլև ոգեշնչում են երեխաներին և ուսուցիչներին:

Նաև կուզեմ շեշտադրել մեր բարեջան ուսուցիչներին. հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին հիմնականում մեր ֆակուլտետն է պատրաստում, նրանք բարեկիրթ են, խորագիտակ են, լուսամիտ, տիրապետում են մանկավարժության կանոններին, բայց մենք դեռ շատ աշխատանք ունենք իրականացնելու թե՛ բանասիրական ֆակուլտետում, թե՛ միջին և ավագ դպրոցներում. ամենօրյա աշխատանքն է բերելու դրական և շոշափելի արդյունքի:

-Հայերենը ճկուն լեզու է, և ինչպես բանաստեղծն է ասում՝ «բարբարոս»: Ընդունենք, որ երբեմն դժվարություններ է առաջացնում ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների համար:

-Հայերենը աշխարհի հնամենի լեզուներից է: Բայրոնի նախընտրած լեզուն է: Տեղին է հիշել ֆրանսիացի գրող Վ. Հյուգոյի խոսքերը «Թշվառները» վեպի թարգմանության առիթով. «Ես ձեր լեզուն չգիտեմ, բայց սիրում եմ այն, նրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը»:

-Ի՞նչ կմաղթեք Ձեր ուսանողներին, շրջանավարտներին ու գործընկերներին:

-Գործընկերներիս առաջին հերթին կմաղթեմ քաջառողջություն, որը շատ կարևոր է. ուսուցիչը պետք է լինի առողջ, որ դժվարին պայմաններում կարողանա իրականացնել իր առաքելությունը: Ուսանողներին հորդորում եմ, որ շատ աշխատեն, շատ ընթերցեն, որ իրենց խոսքը տարբերվի մյուսներից: Հայերենը շատ պերճ լեզու է, և այդ հմայքը պետք է մատուցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչը:

«Խոսքի մշակույթ» առարկան ուսումնասիրում են բուհի տարբեր ֆակուլտետներում: Դա շատ կարևոր է, պետք է ճախարակվի ուսանողի խոսքը, ձայնի հնչերանգը, այն լինի ճշգրիտ և նպատակային:

-Ի՞նչ է հայրենասիրությունը Ձեզ համար:

-Հայաստանին սիրահարվելն է հայրենասիրությունը: Հայը պետք է կապված լինի իր արմատներին: Ես և իմ ուսանողները սիրահարված ենք մեր դրախտային երկրին: Դա նշանակում է՝ լավ աշխատել և լավ սովորել: Ես սիրահարված եմ նաև այն համալսարանին, որտեղ աշխատում եմ: Երբեմն ասում են՝ աշխատավայրը երկրորդ տունն է: Թույլ տվեք ասել՝ գուցե ինձ համար առաջին տունն է, որովհետև օրվա մեջ առավել շատ ես իմ աշխատավայրում եմ լինում, իմ գործընկերների շրջապատում և ուսանողների հետ: Ինձ համար գերագույն հաճույք է աշխատել Մանկավարժական մայր բուհում, որը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բուհ է: Ի տարբերություն այլ բուհերի՝ մանկավարժությունը գալիք սերնդի հետ աշխատանքն է, որը պետք է լինի հաճելի, չափված, ճշգրիտ: Մեր օրերում անհրաժեշտ է հստակ գիտելիքներով, ամուր կարողությամբ, քաջառողջությամբ մտնել դասարան: Եվ ոչ միայն դասարան: Մայրենիի դասը մեր ուսանողների հետ հաճախ ենք դիտարկում տարբեր թանգարաններում, գրադարաններում, բացօթյա վայրերում: Սրանք մայրենիի դասի նորագույն մոդելներ են, որոնք պիտի զարգացնել և շրջանառել: Նաև օգտվել արհեստական բանականության ընձեռած հնարավորությունից: Սա է օրվա հրամայականը:

Իմ գործընկերներին մաղթում եմ առողջություն և նոր արարումներ:

Զրույցը՝ Սիլվա Ասրյանի

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը Մայիսի 7-ին Մանկավարժականում հավաստագրեր հանձնեց «Կրթության նորարար կառավարում և կազմակերպում» թեմայով վերապատրաստման ծրագրի մասնակիցներին:

Հանրակրթական դպրոցների 40 տնօրենի մասնակցությամբ փետրվարի 23-ից ապրիլի 2-ն անցկացված դասընթացը, որն անցկացրել է միջազգային փորձագետ, մեթոդիստ Սեդա Քոչարյանը, միտված էր նորարար կառավարման մշակույթի ձևավորմանն ու կրթության որակի շարունակական բարելավմանը:

Լիլիթ Մկրտչյանը ընդգծեց մանկավարժության դերը մեր հասարակությունում՝ կարևորելով ուսուցչի դերի բարձրացմանը միտված պետության քայլերը և որպես կրթության կառավարիչներ դրա գիտակցումը:

Դասընթացի անցկացման շրջանակում զրուցել ենք Արարատի մարզի Գետազատ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլիթ Գեղամյանի հետ:

«Երբ սիրում ես աշխատանքդ, յուրաքանչյուր դժվարություն դառնում է հաղթահարելի». *Լիլիթ Գեղամյան*

-Տիկի՛ն Գեղամյան, քանի՞ տարի է, որ Դուք ղեկավարում եք Արարատի մարզի Գետազատ գյուղի միջնակարգ դպրոցը:

-Նոր կառավարման համակարգով արդեն երկու տարի դպրոց եմ ղեկավարում, նրանից առաջ հինգ տարի կառավարման հին համակարգով եմ դպրոցի տնօրեն աշխատել: Թերևս ես առաջիններից էի, որն սկսեց աշխատել նոր կառավարման համակարգով. ես դպրոցի զարգացման ծրագիր ներկայացրի, մասնակցեցի հարցազրույցի, և ինձ նորից վստահեցին դպրոցի կառավարումը:

-Դուք ավարտել եք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը, ասել է թե մեր համալսարանի շրջանավարտ եք...

-Նախ ավարտել եմ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, այնուհետև երկրորդ մասնագիտությունն ստացել եմ Մանկավարժականում. 2007 թվականին ավարտել եմ պատմության բաժինը, և պետք է ասեմ՝ Մանկավարժականն իմ հարազատ բուհն է:

-Դուք մասնակցել եք մեր համալսարանի նախաձեռնությամբ անցկացված վեցշաբաթյա դասընթացներին, որը նախատեսված էր հանրակրթական դպրոցների տնօրենների համար: Ի՞նչ տվեց այն Ձեզ կառավարչական հմտությունների առումով:

-Յուրաքանչյուր շաբաթ անց էր կացվում սեմինար՝ կառավարչական հմտությունների հետ կապված, և պետք է արձանագրեմ, որ այն բավականին արդյունավետ անցավ. վերապատրաստողի մասնագիտական և մեթոդական օգնությունը մեզ շատ բան տվեց, անընդհատ սպասում էինք հաջորդ սեմինարին: Պետք է ընդգծեմ՝ այնպիսի միջավայր էր ստեղծված, որտեղ մեզնից յուրաքանչյուրը ստանում էր այն, ինչ իրեն անհրաժեշտ էր, ինչի կարիքն ուներ:

-Դասընթացի արդյունքում ի՞նչ մեթոդներ յուրացրիք, որ պետք է կիրառեք դպրոցում:

-Մենք բազմաթիվ մեթոդներ սովորեցինք: Շաբաթը մեկ մեզ հրամցվող յուրաքանչյուր մեթոդ ու հմտություն ես կիրառում էի իմ ղեկավարած դպրոցում, և պատկերացրեք՝ այն դրական ազդեցություն ունեցավ իմ ղեկավարած մանկավարժական կոլեկտիվի վրա:

Ելնելով այն հանգամանքից, որ ես հանրակրթության պետական չափորոշչի վերապատրաստող եմ եղել, նաև մենթոր եմ, մենթորության շրջանակում հրավիրել եմ իմ գործընկերներին և իրականացրել փորձի փոխանակում: Հավելեմ, որ Արարատի մարզի շուրջ 15 դպրոցների տնօրեններին հաճույքով ներկայացրել եմ այս դասընթացից ստացած նոր գիտելիքներս:

-Հե՞շտ է մեր օրերում դպրոց ղեկավարել:

-Այո, եթե շատ ես սիրում քո աշխատանքը:

-Այսօր դպրոցներում ի՞նչ խնդիրներ կան, թեկուզ հենց Ձեր դպրոցի օրինակով:

-Բազմաթիվ խնդիրներ կան, բայց պետական աջակցությամբ կարողանում ենք դրան լուծել:

-Հանրակրթական դպրոցներում աշակերտների դաստիարակության հետ կապված խնդիրներ կան, որոնք հետևողական աշխատանքներ են պահանջում՝ դպրոց-ընտանիք համատեքստում:

-Այսօր սովորողին պետք է այլ տեսանկյունից նայել, պետք է ընդունենք, որ նա իր օջախ է մտնում, և դպրոցը ընտանիքից շատ չպետք է տարբերվի՝ երեխայի հանդեպ հոգատարության դրսևորումից մինչև այլ մոտեցումներ: Մեր դպրոցի սովորողները մեծ հոգածությամբ են վերաբերվում իմ ղեկավարած դպրոցին: Հավելեմ նաև, որ ես դասավանդում եմ «Հայաստանի պատմություն» առարկան և դասաժամերի ընթացքում սովորողների հանդեպ ժամանակակից մոտեցումներ եմ դրսևորում:

-Այսօրվա ուսուցիչը ի՞նչ խնդիրներ ունի դպրոցում և ի՞նչ առավելություններ:

-Հիմա հնարավորություններն ավելի շատ են, եթե ուսուցիչը ցանկանում է զբաղվել ինքնակրթությամբ: Ինչ վերաբերում է դժվարություններին, նշեմ, որ եղել եմ հանրապետության պետական չափորոշչի ներդրման ջատագովներից, բայց պետք է փաստեմ, որ ձևավորող գնահատման ընկալումների հետ կապված որոշակի խնդիրներ կան. այս ուղղությամբ ենք հիմա որոշակի աշխատանքներ իրականացնում:

-Գնահատման համակարգի հետ կապված ի՞նչ կասեիք:

-Տարրական դասարաններում, որտեղ միանգամից նոր համակարգով են բարձրացել, որևէ խնդիր չկա, իսկ մյուսները, որոնք սովոր էին գնահատվել, կամաց-կամաց փորձում են այդ պատնեշը հաղթահարել:

-Ի՞նչ կպատմեիք Ձեր ղեկավարած դպրոցի մասին:

-Մեր դպրոցը 102 տարեկան է, հիմնադրվել է 1962 թվականին: Նախկինում դպրոցում բարեկարգման աշխատանքներ չեն կատարվել, այժմ դպրոցի նոր շենք է կառուցվում, որի ավարտին ուշի ուշով հետևում ենք:

- ՀՊՄՀ պաշտոնաթերթի միջոցով ի՞նչ կուզեիք ասել Ձեր գործընկերներին:

-Կուզեի ասել, որ շատ սիրեն իրենց աշխատանքը: Երբ սիրում ես աշխատանքդ, յուրաքանչյուր դժվարություն դառնում է հաղթահարելի: Անհաղթահարելի խնդիրներ կարծում եմ չկան, պարզապես յուրաքանչյուրս յուրովի պետք է իմաստավորենք մեր աշխատանքը:

Մանկավարժական համալսարանն ինձ շատ բան է տվել՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ սերն ու հարգանքը այստեղ են իմ մեջ արմատավորել, և ես իմ ամենօրյա աշխատանքով փորձում եմ հավատարմորեն ծառայել իմ առաքելությանը:

Զրույցը՝ Սիլվա Ասրյանի

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՓՈԽՈՒՄ ԵՆ ԿՅԱՆՔԴ

Կյանքի ամենաէական շրջադարձերը հաճախ սկիզբ են առնում մի աննշան թվացող որոշումից: Երբեմն այդ որոշումը դրսևորվում է վճռական գործողությամբ, իսկ երբեմն էլ՝ մեկ բառով: Որպես ապագա բանասեր՝ ես օրեցօր ավելի եմ համոզվում, որ բառը լոկ հաղորդակցման միջոց չէ. այն գիտակցված ընտրություն է, բարոյական պատասխանատվություն և, ի վերջո, ճակատագիր: Մենք ամեն օր կանգնում ենք երկընտրանքի առջև՝ խոսե՞լ, թե՞ նախապատվությունը տալ լռությանը, ինչեցնե՞լ դառը ճշմարտությունը, թե՞ խնայել դիմացինին, լինել շիտակ, թե՞ թաքնվել ակնարկների հետևում: Առաջին հայացքից այս ամենը կարող է թվալ սովորական իրականություն, սակայն իրականում յուրաքանչյուր բառ ու արտահայտություն իր մեջ կրում է անկանխատեսելի հետևանքներ: Մեկ դիպուկ նախադասությունը կարող է կամրջել խարխլված հարաբերությունները, կամ էլ վերջնականապես այրել բոլոր կամուրջները: Լեզուն մարդու ներաշխարհի անխաթար հայելին է. այն բացահայտում է մեր մտածողության շերտերը, արժեհամակարգն ու աշխարհընկալումը: Սակայն առավել ուշագրավ է այն իրողությունը, որ լեզուն ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև կերտում է այն: Ընտրելով բառերը՝ մենք, ըստ էության, կերտում ենք այն միջավայրն ու իրականությունը, որտեղ ապրում ենք մենք և ապրեցնում ենք ուրիշներին: Այս համատեքստում առանձնահատուկ է լռության դերը: Հաճախ մենք լռությունը չենք դիտարկում որպես որոշում, մինչդեռ այն երբեմն ավելի ծանրակշիռ ու պատասխանատու ընտրություն է, քան ամենահռետորական խոսքը:

Մարդու կյանքի առանցքային որոշումներից մեկը, անշուշտ, մասնագիտության ընտրությունն է: Երբ ես նախապատվությունը տվեցի բանասիրությանը, թերևս լիովին չէի գիտակցում, թե որքան հիմնարար դեր են ստանձնելու բառերն իմ կյանքում: Այսօր վստահորեն կարող եմ փաստել՝ դա այն որոշումն էր, որի համար երբեք չեմ զղջացել: Այս ուղին ինձ սովորեցրեց թափանցել բառերի խորքը, զգալ խոսքի կախարդական ուժն ու ընկալել լեզուն, ոչ թե միայն ուսումնասիրության առարկա, այլ որպես կենսակերպ:

Թեև մենք միշտ չէ, որ կարող ենք կառավարել կյանքի հորձանուտը, սակայն մշտապես ունենք ընտրության իրավունք՝ ինչ ասել և երբ լռել: Երբեմն հենց այդ ընտրությունն է դառնում այն անտեսանելի սահմանագիծը, որը մեր կյանքը բաժանում է «մինչև»-ի և «հետո»-ի: Վերջապես, կյանքը փոխող որոշումները միշտ չէ, որ աղմկոտ են ու տեսանելի: Դրանք հաճախ թաքնված են լինում բառերի նրբերանգների, իմաստուն լռության կամ ճիշտ պահին ինչեցրած խոսքի մեջ: Եվ երբ այդ ընտրությունը ներդաշնակվում է քո ընտրած մասնագիտական ուղու հետ, այն դառնում է ոչ միայն ճակատագրական, այլև կյանքը ձևավորող հզոր ուժ: Թերևս հենց այդ որոշումն էր, որն ինձ առաջնորդեց դեպի ամենակարևոր հանդիպումը՝ հանդիպում ինքս ինձ հետ:

Անի Սարգսյան

Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

Պատմությունը՝ խաղի, մշակույթի և մրցակցության լեզվով

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում կայացավ ինտերակտիվ խաղ-մրցույթ, որը մեկ հարթակում էր համախմբել ՀՊՄՀ Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի և Խորեն և Շուշանիկ Ավետիսյան դպրոցի աշակերտներին:

Նախաձեռնության կազմակերպիչը Հայոց պատմության ամբիոնի դասախոս Արմինե Եփրիկյանինն էր: Մրցույթի նպատակն էր ստուգել մասնակիցների գիտելիքները՝ հայոց պատմության, ազգային սովորույթների, հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության, ինչպես նաև ազգային երգ ու պարի վերաբերյալ:

Խաղ-մրցույթը սովորական գիտելիքային ստուգարք չէր. այն կառուցված էր թվային և խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ՝ պատմությունը վերածելով կենդանի ու ինտերակտիվ հաղորդակցության:

Մասնակից աշակերտները մեծ ոգևորությամբ էին պատասխանում հայկական ավանդական պարերի խորհրդաբանության, հայրենասիրական երգերի պատմության և ազգային մշակույթի վերաբերյալ հարցերին: Ջերմ ու առողջ մրցակցային մթնոլորտում ձևավորվել էր ոչ միայն գիտելիքի պայքար, այլև մշակութային երկխոսություն:

Ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանն արդեն ավանդական դարձած ձեռնարկը դպրոց-համալսարան համագործակցության ինքնատիպ դրսևորում և համագործակցության հաջողված օրինակ համարեց: Նրա խոսքով՝ նախաձեռնության առանցքային նպատակը հաղթողների և պարտվողների սահմանումը չէ, այլ կրթական ու դաստիարակչական կարևոր առաքելության իրականացումը՝ հայոց պատմության վերաբերյալ գիտելիքների ձևավորումն ու ամրապնդումը:

Մրցույթի ընթացքում ՀՊՄՀ Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի թիմը առաջնորդվում էր «Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս մեզ համար խաբուսիկ են բոլոր դրախտները», իսկ Խորեն և Շուշանիկ Ավետիսյան դպրոցի սաները՝ «Անցյալից՝ ուժ, ապագայից՝ հաղթանակ» կարգախոսներով:

Աշակերտները մեծ ոգևորությամբ պատասխանեցին հարցերին. խաղն անցավ ջերմ և առողջ մրցակցային մթնոլորտում: Ավարտին մասնակիցները հեռացան ոչ միայն պատվոգրերով ու նոր գիտելիքներով, այլև նոր ընկերական կապերով և անմոռանալի տպավորություններով:

Միջոցառման կազմակերպչական աշխատանքներում ներգրավված ուսանողների համար խաղ-մրցույթը կարևոր գործնական փորձառություն էր՝ հնարավորություն տալով կիրառելու մանկավարժական և մեթոդական հմտությունները իրական կրթական միջավայրում:

Ամփոփելով նախաձեռնությունը՝ Արմինե Եփրիկյանը նշեց, որ նման ձևաչափերը փաստում են՝ պատմության ուսուցումը կարող է լինել ժամանակակից, դինամիկ և ոգեշնչող: Ըստ նրա, նման միջոցառումները ոչ միայն հարստացնում են աշակերտների գիտելիքները, այլև նրանց հաղորդակից են դարձնում բուհական միջավայրին՝ նպաստելով պատմական հիշողության ամրապնդմանն ու ազգային ինքնության պահպանմանը դեռևս դպրոցական նստարանից:

Նշենք, որ մրցույթի արդյունքում 49.5 և 48.5 միավորների տարբերությամբ հաղթող ճանաչվեց ՀՊՄՀ Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի թիմը:

Մարին Աղեկյան

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր թանգարաններն այլևս պարզապես լուռ սրահներ կամ փակ պահոցներ չեն, որտեղ պահպանվում են անցյալի հիշողությունները: Ժամանակակից աշխարհում դրանք վերածվել են

բաց և կենդանի մշակութային տարածքների, որոնք առավել հասանելի են հասարակության բոլոր շերտերի համար: Թանգարանները դուրս են եկել «փակ պատերի» սահմաններից և այսօր մարդկանց հետ հաղորդակցվում են նոր լեզվով՝ տեխնոլոգիաների, ինտերակտիվ ցուցադրությունների, թվային հարթակների և կրթական ծրագրերի միջոցով: Վիրտուալ շրջայցերը, ժամանակակից ցուցադրական լուծումները և նորարարական մոտեցումները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր մարդու զգալ իրեն մշակույթի և պատմության անմիջական մասնակիցը:

Թանգարանների միջազգային օրվա շրջանակում առավել կարևոր է արժևորել թանգարանների դերը ժամանակակից հասարակության կյանքում: Դրանք ոչ միայն պահպանության վայրեր են, այլև կրթության, գիտության, մշակույթի և հանրային երկխոսության կարևոր կենտրոններ: Թանգարանները սովորեցնում են ճանաչել սեփական պատմությունը, գնահատել մշակութային ժառանգությունը և պահպանել ազգային ինքնությունը: Միևնույն ժամանակ, դրանք շարունակաբար զարգանում են՝ դառնալով ավելի բաց, հաղորդակցվող և ժամանակակից:

Որպես ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտություն, գրադարանագիտություն և մատենագիտություն ամբիոնի «Թանգարանային գործ և պատմամշակութային կոթողների պահպանություն» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող՝ իմ ուսումնական պրակտիկան անցկացրել եմ Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանում: Այդ փորձառությունը հնարավորություն տվեց ինձ ոչ միայն գործնականում ծանոթանալ թանգարանային աշխատանքի առանձնահատկություններին, այլև ավելի խորությամբ հասկանալ թանգարանի իրական նշանակությունը հասարակության կյանքում:

Թանգարանում պահպանվում են համալսարանի պատմությանը վերաբերող կարևոր նյութեր՝ լուսանկարներ, փաստաթղթեր, ձեռագրեր և տարբեր ցուցանմուշներ, որոնք ներկայացնում են կրթական հաստատության անցած ուղին ու ավանդույթները: Պրակտիկայի ընթացքում ես մասնակցեցի ցուցանմուշների ուսումնասիրման, դասակարգման և պահպանման աշխատանքներին, ինչպես նաև ծանոթացա այցելուների հետ տարվող կրթամշակութային գործունեությանը:

Հատկապես տպավորիչ էր այն գիտակցումը, որ յուրաքանչյուր ցուցանմուշ պարզապես հին առարկա չէ, այլ պատմության կենդանի վկայություն, որն իր մեջ կրում է ժամանակի հիշողությունն ու մշակութային արժեքը: Թանգարանում անցկացրած օրերն ինձ օգնեցին ավելի մեծ պատասխանատվությամբ և սիրով վերաբերվել մասնագիտությանս՝ հասկանալով, որ թանգարանները կարևոր կամուրջ են անցյալի, ներկայի և ապագայի միջև:

Այսպիսով, ժամանակակից թանգարաններն այսօր դարձել են ավելի բաց, հասանելի և մարդակենտրոն: Դրանք շարունակում են պահպանել մշակութային ժառանգությունը՝ միաժամանակ համադրելով ավանդույթն ու նորարարությունը և ստեղծելով նոր հնարավորություններ հասարակության կրթական ու մշակութային զարգացման համար:

Արուսյակ Գևորգյան
Մագիստրատուրայի 1-ին կուրս

Աթենքի ազգային համալսարանում

Մայիսի 4-8-ը ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը դասախոսություններով հանդես եկավ Կապոդիստրիայի անվան Աթենքի ազգային համալսարանում:

«Հայ բնակչությունը Թուրքիայի հանրապետությունում 1922 թվականից մինչև մեր օրերը (պետքական քաղաքականությունը, ժողովրդագրական ակնարկ)», «Քրդական գործոնը արևմտահայ ազատագրական շարժման մեջ (19-20-րդ դարեր)», «Թուրքիան և Անդրկովկասը 1918-1921 թթ.» թեմաներով դասախոսությունները նախատեսված էին Աթենքի համալսարանի թուրքագիտության բաժնի մագիստրատուրայի ուսանողների համար:

Այցն իրականացվեց Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրի շրջանակներում:

Ամեն դաս մի փոքրիկ բացահայտում էր

Իմ կյանքի ամենակարևոր և ամենահիշարժան ճանապարհներից մեկը սկսվեց 2014 թվականին, երբ առաջին անգամ ոտք դրեցի Հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետ: Մինչ օրս հիշում եմ այդ օրը, հիշում եմ ամենայն մանրամասնությամբ, զգացումներով, նույնիսկ ներսումս տիրող խառնաշփոթով: Մի կողմից՝ անորոշություն, մյուս կողմից՝ մեծ ոգևորություն, մի փոքր վախ, բայց նաև հստակ զգացում, որ կանգնած եմ մի ճանապարհի սկզբին, որը պիտի փոխի ինձ:

Առաջին օրերից արդեն համալսարանը սկսեց բացվել ինձ համար որպես մի ուրույն աշխարհ: Լսարանները դարձան ոչ միայն դասի վայր, այլ մտքերի, գաղափարների ու երազանքների հանդիպման կետեր: Ամեն դաս մի փոքրիկ բացահայտում էր, երբ բառերը դադարում էին պարզապես բառ լինելուց և վերածվում էին զգացմունքների, պատմությունների, մարդկային ճակատագրերի արտահայտման միջոցի:

Բանասիրական ֆակուլտետը ինձ սովորեցրեց տեսնել այն, ինչ առաջին հայացքից անտեսանելի է: Սովորեցրեց հասկանալ տողատակերը, լսել լռությունը, գնահատել խոսքի ուժը: Այստեղ ես հասկացա, որ լեզուն պարզապես հաղորդակցության միջոց չէ, այն մշակույթ է, ինքնություն, հիշողություն: Գրականությունն ինձ համար դարձավ ոչ թե պարտադիր առարկա, այլ մի աշխարհ, որտեղ կարող ես ապրել հազարավոր կյանքեր, զգալ հազարավոր զգացումներ: Բայց այս ամենից առավել՝ համալսարանը ինձ տվեց լավ մարդկանց միջավայր: Դասախոսներ, որոնք ոչ միայն փոխանցում էին գիտելիք, այլ իրենց օրինակով ցույց էին տալիս՝ ինչ է նշանակում լինել նվիրված, մտածող, արժեքներ կրող մարդ: Նրանց յուրաքանչյուր խոսքը հաճախ դառնում էր ոչ միայն ակադեմիական գիտելիք, այլ կյանքի դաս: Ընկերներ, որոնց հետ կիսեցինք ամեն ինչ՝ ուրախություններ, դժվարություններ, անվերջ քննարկումներ, քննությունների լարված պահեր ու հետո՝ հաղթանակի թեթևությունը: Ընկերություն, որ ժամանակի ընթացքում փոխվեց, հասունացավ, բայց երբեք չկորավ և մնաց որպես ամենաթանկ նվերներից մեկը, որ ինձ տվեց ուսանողական կյանքը: Հաճախ եմ հիշում այն պարզ, բայց անչափ ջերմ պահերը՝ միջանցքներում հնչող ծիծաղը, դասերից հետո երկար զրույցները, երբեմն էլ՝ հոգնած, բայց երջանիկ վերադարձները տուն: Այդ ամենը թվում էր սովորական, բայց տարիներ անց հասկանում ես՝ հենց այդ «սովորականն» է դառնում ամենաթանկը:

Այսօր, երբ արդեն աշխատում եմ որպես մանկավարժ, ավելի հստակ եմ գիտակցում, թե որքան մեծ ազդեցություն են ունեցել այդ տարիներն ինձ վրա: Ամեն անգամ, երբ մտնում եմ դասարան, ներսումս ապրում է այն ուսանողը, ով մի ժամանակ նստած էր լսարանում՝ աչքերում երազանքներ ու սրտում անհանգիստ հարցեր: Ես փորձում եմ իմ աշակերտներին տալ ոչ միայն գիտելիք, այլ այն վերաբերմունքը, այն ջերմությունն ու հավատը, որը ես եմ ստացել իմ ուսանողական տարիներին: Փորձում եմ նրանց համար դառնալ ոչ միայն ուսուցիչ, այլ նաև մարդ, որը հասկանում է, լսում ու աջակցում: Եվ, թերևս, ամենահուզիչն այն է, որ այս ճանապարհը չի ավարտվել ավարտական դիպլոմով: Ես մինչ օրս պահպանում եմ իմ կապը Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: Վերադառնում եմ այնտեղ՝ երբեմն որպես այցելու, երբեմն որպես մասնագետ, բայց միշտ՝ նույն սիրով ու կապվածությամբ: Այդ կապը տարիների ընթացքում դարձել է ավելի գիտակցված, ավելի խորը: Եթե ուսանողական տարիներին այն պարզապես իմ առօրյան էր, ապա այսօր այն իմ ինքնության մի մասն է: Այն ձևավորել է ինձ՝ որպես մասնագետ, որպես մարդ, որպես անհատ, որը գնահատում է խոսքը, գիտելիքն ու մարդկային հարաբերությունները:

Իմ սրտի Բանասիրականն ինձ համար պարզապես ֆակուլտետ չէ: Այն իմ կյանքի մի ամբողջ ժամանակահատված է, որը լի է երազանքներով, որոնումներով, սխալներով ու ձեռքբերումներով: Այն մի վայր է, որտեղ ես սովորեցի ոչ միայն մասնագիտություն, այլ նաև կյանք: Եվ որքան էլ տարիները առաջ գնան, որքան էլ կյանքը նոր ճանապարհներ բացի, այս ճանապարհը շարունակվելու է իմ մեջ: Այն միշտ կմնա որպես իմ ներսի մի լուռ, բայց ուժեղ հենարան: Որովհետև կան ճանապարհներ, որոնք մեզ համար չեն ավարտում... դրանք պարզապես դառնում են մեր կյանքի մի մասը ու շարունակվում են մեր մեջ՝ ամբողջ կյանքում:

Դարբինյան Սվետլանա
Աշտարակի Գ. Ղափանցյանի անվան № 4 հիմնական դպրոցի ուսուցիչ

Կիբերհանցագործությունները Հայաստանում

Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը վերջին տարիներին էականորեն փոխել է մարդկանց առօրյան: Այսօր համացանցը դարձել է աշխատանքի, կրթության, հաղորդակցման և ֆինանսական գործարքների անբաժանելի մասը: Սակայն թվային հնարավորությունների ընդլայնման հետ մեկտեղ աճում են նաև կիբերհանցագործությունների ռիսկերը, որոնք լուրջ սպառնալիք են ինչպես քաղաքացիների, այնպես էլ պետական ու մասնավոր կառույցների համար:

ՆԳՆ-ի տրամադրած տվյալների համաձայն՝ Հայաստանում համակարգչային խարդախության դեպքերը վերջին տարիներին զգալի աճ են արձանագրել: Եթե 2022 թվականին գրանցվել է 461 դեպք, ապա 2023 թվականին՝ 630, 2024 թվականին՝ 853, իսկ 2025 թվականին ՝ 922 դեպք: Այս թվերը ցույց են տալիս, որ կիբերհանցագործությունները տարեցտարի ավելի տարածված են դառնում և պահանջում են կանխարգելման ավելի արդյունավետ մեխանիզմներ: Միևնույն ժամանակ, նվազել են համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները: Եթե 2022 թվականին արձանագրվել է 59 դեպք, ապա 2024 թվականին դրանց թիվը հասել է 22-ի, իսկ 2025 թվականին կազմել է 42: Թվերի այս փոփոխությունը կարող է վկայել, որ որոշ ոլորտներում անվտանգության համակարգերը բարելավվել են, սակայն վտանգը շարունակում է պահպանվել:

Փորձագետների կարծիքով՝ Հայաստանում առավել տարածված են սոցիալական ցանցերի միջոցով կատարվող խաբեությունները, կեղծ ներդրումային առաջարկները, բանկային քարտերի տվյալների հափշտակումը, անձնական էջերի կոտրումը: Շատ դեպքերում քաղաքացիները դառնում են անուշադրության զոհ՝ թվային անգրագիտության կամ կեղծ հղումների նկատմամբ վստահության պատճառով:

Կիբերանվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվում են կրթական ծրագրեր: ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ դպրոցներում արդեն ընդգրկված են մեդիագրագիտության դասեր, որոնք նպատակ ունեն սովորեցնել աշակերտներին անվտանգ օգտվել համացանցից, տարբերակել կեղծ տեղեկությունը և պաշտպանել անձնական տվյալները: Բացի այդ, ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը 2024 թվականին ստեղծել է «Մեդիագրագիտությունը Հայաստանի դպրոցներում» ձեռնարկը, որը կարող է կարևոր գործիք դառնալ դպրոցականների թվային կրթության համար:

Ընդհանուր առմամբ, կիբերհանցագործությունները Հայաստանում շարունակում են աճել: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է հանրության իրազեկվածության բարձրացում, կրթական ծրագրերի ընդլայնում և քաղաքացիների պատասխանատու վարքագիծ թվային միջավայրում: Միայն այս կերպ հնարավոր կլինի նվազեցնել կիբերվտանգները և ստեղծել ավելի անվտանգ թվային հասարակություն:

Էլմիր Շելունց
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրս

Բնության մեջ դանդաղելը գիտակցված ընտրություն է...

Հավանաբար բոլորս էլ մեր կյանքի ինչ-որ փուլում նկատել ենք, որ միշտ շտապում ենք: Անընդհատ ինչ-որ բան փորձում ենք անել կատարյալ, շատ դեպքերում էլ՝ մեզնից պահանջում ենք անհնարինը, որի հետևանքով էլ մոռանում ենք ամենակարևորը՝ ներքին հանգստությունը: Այս ճանապարհին մարդը երբեմն նույնիսկ չի էլ հասցնում գիտակցել, որ հոգնած է և սպառված:

Ստեղծագործող մարդու կյանքում կարևոր են դադար տալն ու դանդաղելը: Վերջինս օգնում է համակարգել մտքերը, դառնալ ավելի ուշադիր, հոգատար վերաբերմունք ունենալ սեփական հուզական դաշտի նկատմամբ:

Դանդաղ ապրելուն ձգտելու ճանապարհին իմ ամենամեծ բացահայտումը բնության հետ կապն էր՝ բնության մեջ դանդաղելով: Սրա բացահայտմանը ինձ բերեց բնության մեջ գիրք կարդալը և ավելի կենտրոնացած հետազոտական աշխատանք կատարելը: Բնության մեջ դանդաղելը գիտակցված ընտրություն է, որը ձևավորում է սեփական «ես»-ը լսելու և ճանաչելու մշակույթը:



Ինձ միայն այստեղ է հնարավոր մի պահ կանգ առնել, նկատել մանրունքներն ու աշխատել սեփական կարողությունների զարգացման վրա: Եվ հենց այդ մանրուքները նկատելն էլ կարող է ապագայում դառնալ ստեղծագործական ներշնչանքի աղբյուր:

Բնությունն ամեն պահ հնարավորություն է ընձեռում ստեղծագործելու: Ջրի կարկաչը, քամու սոսափյունը, տերևների խշշոցը, ծաղիկների մեղմ բույրը ստեղծում են լավագույն նախադրյալները՝ ստեղծագործելու համար, քանի որ լռության մեջ հնչող բնության ձայներն ավելի խոսուն են, ավելի բարբառուն:

Որպես բանասեր, մանկավարժ՝ չափազանց կարևորում եմ բնության պահպանության, էկոլոգիական դաստիարակության և ստեղծագործական մտածողության խթանման դերը յուրաքանչյուրիս կյանքում, որը պետք է սովորեցնենք մեր աշակերտներին դեռ վաղ տարիքից, ինչպես նաև ձևավորենք մարդ-բնություն կապը, ցույց տանք դրա արգասաբեր ազդեցությունը գրականության մեջ:

Էմմա Սիմոնյան
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համացայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ